ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ԱՀ, ք.Ստեփանակերտ, Փետրվարի 20-ի 3, հեռ.(+374 47) 95-04-45

N 4-04/722 «17» օգոստոսի 2022 թ.

«Հետաքննող լրագրողներ» հ/կ,
«Հետք» թերթի լրագրող
Արմեն Միրզոյանին

Ի պատասխան ս.թ. օգոստոսի 12-ին Արցախի Հանրապետության նախագահին Ձեր կողմից հասցեագրված գրությանը՝ ստորև ներկայացնում ենք առաջադրված հարցերն ու դրանց պատասխանները:

ՀԱՐՑ 1. Արդեն հայտնի է, որ Հայաստան-Արցախ կապը ապահովվելու է նոր ճանապարհով, որն սկսվելու է Հայաստանի Կոռնիձոր գյուղից, անցնելու է Քաշաթաղի շրջանի մի փոքր հատվածով և մտնելու է Շուշիի շրջան: Արդյոք եռակողմ հայտարարության վեցերորդ կետով նախատեսված 5 կիլոմետր լայնությամբ միջանցքը տարածվելո՞ւ է նաև այս նոր մայրուղու նկատմամբ:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նոր ճանապարհն ունենալու է միջանցքի կարգավիճակ, և 2020 թվականի նոյեմբերի 9-ի փաստաթղթի 6-րդ կետի համաձայն խաղաղապահների պահակակետերը տեղադրվելու են նոր երթուղու շուրջ: Հետևաբար, ձևավորվելու է նոր միջանցք:

ՀԱՐՑ 2. Եթե այո, ապա արդյոք, ըստ տրամաբանության (5 կիլոմետր լայնությամբ միջանցք), աղրբեջանական վերահսկողության տակ անցած որոշ տարածքներ վերադառնալո՞ւ են ռուսական խաղաղապահ ուժերի վերահսկողության ներքո:

ՊԱՏԱՍԽԱՆ. Բնականաբար: Ըստ 2020 թվականի նոյեմբերյան եռակողմ հայտարարության 6-րդ կետի՝ Լաչինի միջանցքը (5 կմ լայնությամբ), որն ապահովելու է Լեռնային Ղարաբաղի կապը Հայաստանի հետ, մնում է Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի վերահսկողության ներքո:

ՀԱՐՑ 3. Խնդրում ենք հստակ նշել, թե Հայաստանն Արցախին կապող նոր ճանապարհը, ըստ նախատեսված պլանի, ո՞ր բնակավայրերի միջով է անցնելու:

ՀԱՐՑ 4. Կոնկրետ ո՞ր հատվածում է նոր մայրուղին միանալու Գորիս-Ստեփանակերտ հին մայրուղուն:

ՊԱՏԱՍԽԱՆ (3,4). Հայաստանն Արցախին կապող նոր ճանապարհն անցնում է Քաշաթաղի և Շուշիի շրջաններով: Քաշաթաղի շրջանում միջանցքի հատվածն ընդգրկում է Մարաթուկ, Մելիքահող, Հունանավան և Մեղվաձոր բնակավայրերի ու բնակատեղիների տարածքը, Շուշիի շրջանում ճանապարհն ացնում է Հին շեն և Մեծ շեն համայնքներով և Տասը Վերստ գյուղի տարածքում միանում է Գորիս – Ստեփանակերտ գործող մայրուղուն:

ՀԱՐՑ 5. Արդյոք այդ մայրուղին շրջանցելո՞ւ է Շուշի քաղաքը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այս փուլում ԱՀ իշխանությունները նման քննարկումների մասին տեղյակ չեն:

ՀԱՐՑ 6.Ինչպես է կարգավորվելու դեպի Շուշի քաղաք տանող հատվածի անվտանգությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Ստեփանակերտ-Գորիս մայրուղու Ստեփանակերտ- Շուշի հատվածի անվտանգության ապահովման կարգավորումներում որևէ փոփոխություն չի նախատեսվում:

ՀԱՐՑ 7. Արդյոք Արցախի ոստիկանությունը առանձին հատվածներում վերահսկելո՞ւ է ճանապարհի անվտանգությունը:

ՊԱՏԱՍԽԱՆ. Այո: ԱՀ ՆԳՆ ծառայողները ճանապարհի անվտանգությունն ապահովելու հարցում կատարելու են իրենց պատրականությունները:

ՀԱՐՑ 8. Ըստ պայմանավորվածության՝ ռուսական քանի՞ անցակետ է տեղակայվելու նոր մայրուղու վրա:

ՊԱՏԱՍԽԱՆ. Նման պայմանավորվածություն չկա:

Կ. ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ